



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



« 28 » 03 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 038 - 24

Ձեռնարկողը՝

Արթուր Ապրեսյան

Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք, Նոր Հաճրն
բնակավայրի Ա.Ջուլֆյան թաղամասի 7-րդ փողոց № 12-16

Գործունեությունը՝

**Նոր Հաճրն համայնքի Նոր Հաճրն բնակավայրի
Ա.Ջուլֆյան թաղամասի 7-րդ փողոց
№ 12-16 հասցեում նախատեսվող
հանդիսությունների սրահի կառուցում
Կոտայքի մարզ**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

«28» Ծարպիս 2024թ.

Արթուր Ապրեսյանի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնքի Նոր Հաճրն բնակավայրի Ս.Ջուլֆյան թաղամասի 7-րդ փողոցի № 12-16 հասցեում նախատեսվող հանդիսությունների սրահի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայր

Ձեռնարկող՝	Արթուր Ապրեսյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայր
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնքի Նոր Հաճրն բնակավայրի Ս.Ջուլֆյան թաղամասի 7-րդ փողոցի № 12-16

Ներածական մաս. Արթուր Ապրեսյանի կողմից նախատեսվում է Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնքի Նոր Հաճրն բնակավայրի Ս.Ջուլֆյան թաղամասի 7-րդ փողոցի № 12-16 հասցեում կառուցել հանդիսությունների սրահ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի, 4-րդ մասի, 8)-րդ կետի, ա) ենթակետի համաձայն՝ ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում, քանի որ անջրանցիկ բարեկարգման տարածքի մակերեսը գերազանցում է 1000 քմ-ը /նախատեսվող բարեկարգման՝ անջրանցիկ տարածքների մակերեսը կազմում է 2464.2 քմ/:

Նախատեսվող հանդիսությունների սրահի նախագծային աշխատանքների համար հիմք են հանդիսացել պատվիրատուի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման № 08012018-07-0051 վկայականը՝ 0,4 հա /ծածկագիրը՝ 07-006-0006-0031/, Նոր Հաճրն համայնքի ղեկավարի կողմից 19.06.2023թ. տրված № 169 ճարտարապետահատակագծային առաջադրանքը (նախագծման թույլտվություն): Գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Քննարկվող տարածքը գտնվում է Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնքի Նոր Հաճրն բնակավայրի Ս.Ջուլֆյան թաղամասի 7-րդ փողոցի № 12-16 հասցեում: Տարածքն իրենից ներկայացնում է պարզ ռեկտանգուլ 0.4 հա մակերեսով հողատարածք, որտեղ էլ նախատեսվում է կառուցել հանդիսությունների սրահը: Շինության արտաքին առավելագույն չափերը՝ ներառյալ երեսապատումը, մուտքի աստիճանները և հարթակները կազմում են 43.24x31.92 մ, իսկ արտաքին առավելագույն չափերն առանց երեսապատման, մուտքի աստիճանների և հարթակների կազմում են 42.5x25.3մ:

0.00 նիշից հաշված առավելագույն բարձրությունը կազմում է 15.4 մ, իսկ հողի մակերեսային ամենացածր մակարդակից հաշված՝ առավելագույն բարձրությունը կազմում է 15.4 մ:



16.0 մ: Առաջին հարկի բարձրությունը 4.50 մ է, երկրորդ հարկի բարձրությունը՝ 3.90 մ, իսկ երրորդ հարկի բարձրությունը՝ 3.10 մ:

Ստորգետնյա մասի մակերեսը կազմում է 50 քմ, որը կահավորված է սանհանգույցով, օդափոխությամբ և վթարային լուսավորությամբ:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը տեղակայված է Կոտայքի հրաբխային սարավանդի հարավային մասում, Հրազդան գետի կիրճի՝ աջ բարձրադիր ափին. հարթության վրա: Տեղագնվող տարածքը ներկայացնում է հրաբխային դեյուվիալ լանջի մի հատված: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1343.0 (պայմանական) մետրի սահմաններում:

Տեղամասի երկրաբանալիթոլոգիական կտրվածքին մասնակցում են հետևյալ երեք հիմնական շերտերը՝ վերևից-ներքև.

Շերտ-1

Հողաբուսական շերտ: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՈՒՄ IV-5-82-ի հավաքածու 1, աղյուսակ 1-ի (9a) I կարգ է:

Շերտ-2

Խճային խճավազային գրունտ՝ պինդ ավազային, կավավազային լցանյութով: Գրունտը միջին կարբոնատացված է:

Շերտի անցած հզորությունը 2.5 մետր է: Վերին պլիոցեն դարակարգի էյուվիալ-դեյուվիալ նստվածքներ են:

Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՈՒՄ IV-5-82-ի հավաքածու՝ 1, աղյուսակ 1-ի (34b) II կարգ է:

Շերտ-3

Կոպճային, ավազային գրունտ տեղ-տեղ գետաքարերի, հազվադեպ ճալաքարերի պարունակությամբ Շերտի անցած հզորությունը 3,7 մետր է: Վերին պլիոցենի ժամանակաշրջանի էյուվիալ-դեյուվիալ նստվածքներ են:

Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՈՒՄ IV-5-82-ի հավաքածու 1, աղյուսակ 1-ի (6r) IV կարգ է:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 6 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով և ալյումինով: Քաղսի գյուղից ներքև ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված վանադիումով: Արգել գյուղից ներքև, Արզնի ՀԷԿ-ից վերև, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Արգել գյուղից ներքև և Արզնի ՀԷԿ-ից վերև պայմանավորված վանադիումով, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ հատվածում՝ ամոնիում, ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանում՝ ամոնիում իոնով և վանադիումով, Գեղանիստ գյուղի մոտ՝ ամոնիում, ֆոսֆատ իոններով և վանադիումով:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

Տարածքում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Ուսումնասիրվող տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Նախկինում տվյալ տեղամասում մինչև 50 մետր խորությամբ փորված հորատանցքերով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ արխիվային նյութերի հրաբխային սարահարթի սահմաններում դրանք գտնվում են 50



մետրից խորը հորիզոններում: Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա, բացակայում են:

Հանդիսությունների սրահի երեսապատումը նախատեսվում է իրականացնել քարով և սվաղով, ցոկոլային հատվածում՝ բազալտով:

Ստորգետնյա մասի մակերեսը կազմում է 50 քմ: Այն ունի երկակի նշանակություն, որն անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես պարզագույն թաքստոց: Այս հարկում նախատեսված են սանհանգույցներ պատասպարանից օգտվողների համար, այդ թվում նաև մեկ սանհանգույց սահմանափակ կարողությամբ մարդկանց համար: Տվյալ տարածքն ապահովված է օդափոխությամբ և վթարային լուսավորությամբ:

Աստիճանավանդակներում նախատեսված է տեղադրել հրակայուն դռներ:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար նախատեսվել են համապատասխան սալիկապատված հարթ և թեք ճանապարհներ՝ դեպի հասարարական տարածքներ:

Նախատեսվող գործունեության տարածքում բույսեր կամ կենդանիներ, որոնք գրանցված են ՀՀ Բույսերի կամ Կենդանիների Կարմիր գրքերում, բացակայում են:

Հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

Հողամասի մակերես՝ 4000 քմ,

Կառուցապատման մակերես՝ 1217.9 քմ- 30.4%,

Կանաչապատման մակերես՝ 880 քմ – 22 %,

Անջրանցիկ մակերես՝ 1902.1 քմ – 47.6 %,

Վերգետնյա կայանատեղիների քանակ՝ 36,

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում:

Հանդիսությունների սրահում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգեր, որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտագործմամբ ապահովել աղմուկի ցածր մակարդակ:

Հանդիսությունների սրահի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու են համաձայն մատակարար կազմակերպության հետ կնքված պայմանագրի:

Շինարարության փուլում ջրցանման համար անհրաժեշտ ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, Հաճըն քաղաքի ոռոգման ջրի ցանցից: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն մատակարար կազմակերպության հետ կնքված պայմանագրի:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է համայնքի հետ համաձայնեցված բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի համաձայն:



Նախատեսված է շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ:

Նախատեսված են իրականացնել հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը ուղղորդել պարզարան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացնել փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- շինարարական նյութերը տեղադրել բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից,
- հողաբուսաշերտը, որի հզորությունը կազմում է 10 սմ, ընդհանուր մոտ 400 խմ, կօգտագործվի կանաչապատման աշխատանքներում:
- Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է կամ մոտակայքով անցնող ոռոգման ցանցից կամ բերովի ջրով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության ժամկետը սահմանված է շինարարության թույլտվության տրամադրումից հետո 36 ամիս, նշված հարցը կհստակեցվի շինարարության թույլտվության տրամադրումից մոտ 2 տարի հետո,
- աղմուկի մակարդակը նվազեցնելու համար շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում,

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողներն, այդ թվում նաև վարորդներն, անցնում են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումն իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում հրշեջ հիդրանտի տեղադրում,
- շինարարական աշխատանքների տեղամասերում հրդեհաշիջման սկզբնական միջոցների տեղադրում, հակահրդեհային անվտանգության պաստառների և հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումների և այլն տեղադրում,
- հեղուկ նյութերի տեղափոխում շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

Հանդիսությունների սրահի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.



1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:
2. Փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:
5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն Կառավարության 2020 թվականի հուլիսի 2-ի նիստի № 87 արձանագրության պահանջների:
6. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար, չորացած տեսակները փոխարինի նորերով:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 2340000 ՀՀ դրամ:

Պարճառարանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել նախնական գնահատման հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Հանդիսությունների սրահի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» № 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի, և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:

2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
 - շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,



- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
 - շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
 - շաղախի և բետոնի տեղափոխումն իրականացնել մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
 4. Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի համաձայն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:
 5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
 6. Վերջնական նախագծում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, «ՀԷՑ» ՓԲԸ-ի և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի պահանջները:
 7. ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:
Առաջարկվող միջոցառումներն ընդունել պարտադիր կատարման պայման:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

Արթուր Ապրեսյանի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Ս. Ջուլֆյան թաղամասի 7-րդ փողոց N° 12-16 հասցեում նախատեսվող հանդիսությունների սրահի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



 Մ. Սափրյան